№ 142 Հոկտեմբերի 1 Հաբաթ 1883 Հոկտեմբերի 1 Հաբաթ № 142

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԴՈԿՏՈՐ Ա. ԲԱԲԱՅԵԱՆԻ
ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ
Սերգիեվսկի փողոց, Նիկ. Քրիդոնովի տանը,
№ 17.
3—4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի օրինակելի տնտեսութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Շուշուց։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծեր»։

ՄԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Մի հինգ տարի սրանից առաջ „Մշակի“ մէջ տպվեցաւ մի թղթակցութիւն Շահնազար Հայ-կաթոլիկ գիւղից, որ այդ գիւղը վճռել էր ընդհանուր հաշուով գնել մասնաւոր կալուածատէրերից մեծ հողեր, որ և պէտք է յատկացվէին գիւղի համայնքի հողերին։

Այժմ մեր թղթակիցը գրում է մեզ, որ Շահնազար Հայ-կաթոլիկ գիւղը տնտեսապէս շատ ծաղկած դրութեան մէջ է գտնվում, շնորհով այն հանգամանքի, որ գիւղացիները մի հինգ տարի առաջ ընդհանուր հաշուով գնեցին մասնաւոր կալուածատէրերից (որքան յիշում ենք պ. Բէղակից կամ նրա ժառանգներից), ահագին հողեր, որ և դարձրին գիւղի համայնքի հողեր։ Թղթակիցն ասում է, որ այժմ այդ գիւղի իւրաքանչիւր գիւղացու վրա ընկնում է 15 դեսիատին հող, և իւրաքանչիւր տան մէջ կայ մի ջուխտ գութան, ուրեմն դրան համեմատ կայ 36 ղլուխ եզ։

Այդ տեսակ հարստութիւն հազիւ է պատահում տեսնել որ և է ուրիշ գիւղում մեր Անդրկովկասեան երկրում։ Ասում են որ շահնազարցիները դիտաւորութիւն ունեն դարձեալ գնել հողեր մասնաւոր կալուածատէրերից, որոնք իրանց գիւղից ոչ հեռու են գտնվում և միացնել այդ հողերը էլ գիւղի համայնքի հողերին։

Մեզ պատմում են որ այժմ Լօռու գաւառի և ուրիշ գիւղեր սկսել են հետևել Շահնազար գիւղի օրինակին և սկսել են իրանց համայնքի համար վարելահողեր առնել։

Մենք հետաքրքրվեցանք այդ հարցով և, որքան իմացանք, այդ օպէրացիան այսպէս է կատարվում։ գիւղի իւրաքանչիւր տունը վեր է գալիս դիցուք հինգական ռուբլ, այդպիսով գոյանում է դիցուք ընդամենը 1000 ռուբլ, իսկ հողը արժէ դիցուք 1500, կամ 2000 ռուբլ, կամ աւելի. այսպիսով մնացած 500, կամ 1000 ռուբլ յետաձգութեամբ վճարվում է սեփականատիրոջ՝ հինգ, վեց, կամ տաս տարվայ ընթացքում, իւրաքանչիւր տարի 100, կամ 200, կամ 300 ռուբլ։ Բայց հասկանալի է, որ առաջին վճարքի մտցնելուն պէս, հողը դառնում է արդէն գիւղական համայնքի սեփականութիւն։

Մեզ պատմում են, որ բացի հայ-կաթոլիկ Շահնազար գիւղից այդպէս առնում են այժմ մասնաւոր կալուածատէրերից հողեր Լօռու գաւառի և մի քանի հայ-լուսաւորչական գիւղեր և մանաւանդ մալականների գիւղեր։

Բացի սորանից մենք իմացանք որ և Բօրչալուի գաւառի Բօյնիս-խաչին հայոց գիւղը նոյնպէս այս ձևով սկսեց առնել հողեր մասնաւոր սեփականատէրերից։

Եթէ ընթերցողը յիշում է, մենք վաղուց արդէն այդ հարցի վրա խօսում էինք „Մշակի“ մէջ և միշտ յորդորում էինք մեր գիւղացիներին հետևել Շահնազար գիւղի օրինակին։ Մեզանում սովորութիւն կայ ամեն բանի վրա գանգատվել, բայց ոչինչ չանել դանգատներին առիթ տուող այդ հանգամանքներից ազատվելու համար։

Պատահում է որ գիւղական համայնքը հողի պակասութիւն ունի. և ահա գիւղացիները սկսում են ապարդիւն կերպով գանգատվել։ Այն ինչ նրանք կարող էին նոյնն անել, ինչ որ արել են շահնազարցիները, ինչ որ անում են անդադար մալականները, այսինքն գիւղի ընդհանուր հաշուով գնել հողեր մասնաւոր կալուածատէրերից և դարձնել այդ նոր գնած հողերը գիւղի համայնքի սեփականութիւն։

Անհող գիւղերի, հողազուրկ գիւղացիների համար, կամ գոնէ հողի պակասութիւն ունեցող գիւղերի համար՝ մեր վերև պատմած միջոցը ընդհանուր գիւղական հողեր ձեռք բերելու ամենալաւ միջոց է հողի պակասութեանն առաջն առնելու համար։ Դա մի օրինակելի միջոց է, որ և կարող է նպաստել գիւղի տնտեսական ծաղկման, կարող է ստեղծել մեր երկրում մի օրինակելի շինական տնտեսութիւն։

Ցանկալի է որ մեր երկրի այն բոլոր նահանգներում և գաւառներում, որտեղ գիւղացին տանջվում է հողի սակաւութիւնից, ցանկալի է որ սակաւ հող ունեցող գիւղերը մեր վերև ցոյց տուած ճանապարհով ձեռք բերէին իրանց համար հարկաւոր հողեր, փոխանակ միշտ և ապարդիւն կերպով գանգատվելու անաջող հանգամանքների դէմ և մի և նոյն ժամանակ ոչինչ չանելու այդ անաջող հանգամանքներին առաջն առնելու համար։

Մեզանում ապարդիւն գանգատը սովորական բան է, այն ինչ խելացի ինքնաօգնութիւնը գանգատից աւելի նպատակայարմար է։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Սեպտեմբերի 23-ին

Երբ որ և իցէ հասարակական հիմնարկութեան գլուխն են կանգնում այնպիսի մարդիկ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ. ՀԱՅԿՈՒՆՈՒ ԿՐԻՏԻԿԱՆ ԵՒ «ԿԱՅԾԵՐԸ»

—

Որովհետև պ. Հայկունու յօդուածի մէջ ոչ կապ կայ և ոչ կանոնաւոր դասաւորութիւն, այլ ամեն ինչ անշնորք կերպով կարկատած է միմեանց հետ, այդ պատճառով շատ դժուար է մի ամբողջական գաղափար տալ նրա բովանդակութեան մասին։ Եւ այդ իսկ պատճառով ես պիտի աշխատեմ նրա նկատողութիւնները կարելոյն չափ դասաւորել, և մի առ մի վեր առնելով այդ նկատողութիւնները, ցոյց տալ նրանց ամենայն ճշմարտութիւնից զուրկ լինելը։

Պ. Հայկունին, իր յօդուածի սկզբում «Կայծերի» բովանդակութիւնը ծուռ ու սխալ կերպով պատմելուց յետոյ, անցնում է նրա քննադատութեանը։ Հէնց սկզբից պարոնը աշխատում է ցոյց տալ, որ «Կայծերը» չէ կարող լինել ճիշտ նկարագիր տաճկահայերի կեանքի, որովհետև հեղինակը չէ ճանաչում այն երկիրը, այն կեանքը, որտեղից առել է իր վէպի նիւթը։ Ահա նրա խօսքերը.

«Րաֆֆին տաճկահայերին ճանաչում է միմիայն լրագիրներից և մի քանի անկատար, անճիշտ գրքերից, գուցէ և մի քանի ծանօթներից, իսկ զոքա երբէք բաւական չեն տաճկահայերի կեանքից «Կայծեր» գուրս ցոլացնելու»։

Պարոնը մոռանում է, որ «Կայծերի» առաջին հատորի գործողութիւնների մի մասը կատարվում է Պարսկաստանի Սալմաստ գաւառում, որ հեղինակի հայրենիքն է, ուրեմն նա չէր կարող ծանօթ չը լինել իր հայրենիքի հետ։ Իսկ մնացած մասի գործողութիւնները կատարվում են Սալմաստի սահմանակից Վանայ նահանգում, որտեղ հեղինակը մի քանի անգամ ճանապարհորդել է։ Դեռ 1860 թուականում «Հիւսիսափայլի» մէջ տպվեցաւ նրա Վանայ նահանգում կատարած ճանապարհորդութեան մի մասը, իսկ 1872 թուականում, այսինքն «Մշակի» հրատարակվելու հէնց առաջին տարվայ մէջ, այդ լրագրում սկսվեցան տպվել նրա Պարսկաստանի ճանապարհորդութիւնները, որոնք ամենայն հետաքրքրութեամբ կարդացվում էին։ Ուրեմն «Կայծերը» գրելու համար Րաֆֆին կարօտութիւն չունէր իր տեղեկութիւնները քաղել «միմիայն լրագիրներից և մի քանի անկատար, անճիշտ գրքերից», երբոր ինքը անձամբ ուսումնասիրել է այդ երկրների կեանքը։ Այլ ես չեմ խօսում այն բազմաթիւ ստուար յօդուածների մասին, որ «Մշակի» զոյութեան տասն և երկու տարվայ ընթացքում, գրել է նա Պարսկաստանի և Տաճկաստանի մասին։

Ցիշեալ նկատողութիւնից յետոյ, պ. Հայկունին վերջը ինքն իրան հակասում է, ասելով.

«Կայծերի» մէջ գեղեցիկ կերպով նկարագրված են քրդերը, Թուրքերը և պարսիկները»։

Եթէ հեղինակը այնքան ճանաչում է Պարսկաստանի և Տաճկաստանի քրդերին, Թուրքերին և պարսիկներին, որ կարողանում է նրանց կեանքը գեղեցիկ կերպով նկարագրել, ինչու չէր կարող ճանաչել և տեղային հայերին, քանի որ ինքն ևս հայ է, և ծնված է նոյն աշխարհում, ուր ապրում են «Կայծերի մէջ նկարագրված հայերը։

Պ. Հայկունու յօդուածը լի է այս տեսակ միմեանց հակասող, միմեանց հակառակ մտքերով։ Մի տեղում նա ասում է, թէ «Կայծերի» մէջ գեղեցիկ կերպով նկարագրված է քրդերի, Թուրքերի և պարսիկների կեանքը, իսկ հայերի կեանքի նկարագրութիւնը թոյլ է գտնում, որովհետև հեղինակը իր տեղեկութիւնները հայերի մասին, նրա կարծիքով, քաղել է լրագիրներից և միքանի անկատար, անճիշտ գրքերից։ Ցաննկարած այդ բոլորը մոռանալով, մի այլ տեղում ասում է, որ «Կայծերի» մէջ բոլորովին կեանք չը կայ։ Ահա նրա խօսքերը։

«Նրանում («Կայծերի» մէջ) չը կայ կեանք, ոչ անցեալի, և ոչ էլ ներկայի։ «Կայծերը» ոչ պատմական վէպ է, ոչ էլ ժամանակակից։ Այլ նա մի վէպ, մի գրվածք է հայ-պագայ կեանքից։ «Կայծերը»—եթէ կարելի է այսպէս ասել—իբր մի ծրագիր է տաճկահայերի ապագայ կեանքին, գործունէութեանը։ Եւ որովհետև նա մի ծրագիր է, ուրեմն վէպ, գեղարուեստական գրուածք կոչելու իրաւունք չունի» և այլն։

Այդ բօսքերից երևում է, որ «Կայծերը» հեքեաթ չէ, ինչպէս պ. կրիտիկոսը իր յօդուածի սկզբում ամենայն ջանքով աշխատում էր ապացուցանել։ Այժմ պ. կրիտիկոսը «Կայծերի» համար մի նոր անուն է հնարել—«ծրագիր»։

Կրիտիկոսի պարտաւորութիւնն է ցոյց տալ՝ իր քննութեան առարկայ ընտրած գրքի գրականութեան որ ճիւղին պատկանելը։ Պ. Հայկունին ևս այդ պայմանը ի նկատի է ունեցել, որ «Կայծերը» առաջ կոչել է հեքեաթ, իսկ յետոյ ինքն իրան հակառակելով, կոչում է ծրագիր։ Եւ այդ ծրագիր բառի վրա էլ պիտի կանգնեմ։

Ի՞նչ է նշանակում ծրագիր։—Առանց բացատրելու, ամեն մարդ գիտէ ծրագրի նշանակութիւնը։ Բայց մի վէպի համար ասել ծրագիր, ես կարծում եմ, պէտք չէ հասկանալ մի որ և իցէ կանոնաւորութիւն զանազան յօդուածների և պարագրաֆների թանձանձներով։ Վէպը այդ ձևերը չունի իր մէջ։ «Կայծերի» մէջ ևս այս տեսակ պարագրաֆներ չը կան։ Այսու ամենայնիւ, ամեն մի վէպ, որ բովանդակում է իր մէջ մի որոշ տենդենցիա, կարելի է փոխաբերական կերպով ծրագիր կոչել, թէև այդ անունը շատ անյարմար է։ Շալիշադէնի «Անտառապահի ընտանիքը» կոչված վէպը նոյնպէս մի ծրագիր է մշակների հարցի վերաբերութեամբ։

Բայց վէպի ձևով գրված ծրագիրը բոլորովին ուրիշ իրպարանք ունի։ Նրա մէջ պարագրաֆների տեղ ծառայում է նոյն իսկ կեանքը իր բազմակողանի երևոյթներով։ Ուրեմն, եթէ «Կայծերը» պ. Հայկունու կարծիքով մի ծրագիր է, նրա մէջ ևս անպատճառ պէտք է կեանքի նկարագրութիւնները լինեն։ Այլ ևս ինչ հիման վրա պ. կրիտիկոսը պնդում է, թէ «Կայծերի» մէջ չը կայ կեանք ոչ անցեալի և ոչ ներկայի։

Գլխաւոր պատճառը, որ պ. Հայկունուն մոլորեցնում է և նրան հակասութիւնների մէջ է ձգում, այն է, որ այդ պարոնը չէ ուզում պարզ խոստովանվել, թէ «Կայծերը» վէպ է։ Նա վէպ էլ է անուանում, հեքեաթ էլ է անուանում, ծրագիր էլ է անուանում, բայց ոչ մէկի վրա չէ կանգնում։ Եթէ վեր առնէր նրան իբրև վէպ, պէտք է ցոյց տար, արդեօք պատմական է նա, թէ ժամանակակից։ Իբրև պատմական վէպ, պէտք է նայէր նրա վրա պատմական տեսակէտից, իսկ իբրև ժամանակակից վէպ, պէտք է նայէր ժամանակակից կեանքի տեսակէտից։ Բայց այդ բոլորից խոյս է տալիս նա, ասելով. «Կայծերի» մէջ չը կայ կեանք ոչ անցեալի և ոչ էլ ներկայի։ «Կայծերը» ոչ պատմական վէպ է և ոչ էլ ժամանակակից։ Հէնց այդ սխալ որոշումը նրան ձգում է բազմաթիւ հակասութիւնների մէջ։ Ահա որպէս.

Եթէ «Կայծերը» ոչ պատմական վէպ է և ոչ ժամանակակից, եթէ նրա մէջ չը կայ կեանք ոչ անցեալի և ոչ էլ ներկայի,—այս տեղից լոգիկաբար ծագում է այն միտքը, որ «Կայծերի» հերոսները, նրա մէջ գործող անձինքը, այլ խօսքով, նրա տիպերը ոչ գոյութիւն են ունեցել անցեալում, այսինքն հայոց պատմական կեանքում, և ոչ էլ նրանք գոյութիւն ունեն այժմ, այսինքն հայոց ներկայ կեանքում, այլ նրանք Րաֆֆիի երևակայութեան ծնունդ են, որոնց ստեղծել է ինքը հեղինակը։ Եւ այսպէս էլ ասում է պ. Հայկունին, թէ «Կայծերի մէջ գործողները «իրական» մարդիկ չեն, այլ «վերացական և երևակայական» են։ Շատ լաւ։ Ուրեմն էլ ինչ լոգիկայով պ. կրիտիկոսը համեմատում է «Կայծերի տիպերը Աբովեանի, Աղայեանցի, Պռոշեանցի, Ծերենցի տի-

որոնք իրանց սեփական քթից դէնը ոչինչ տեսնել չեն կամենում, երբ այդ տեսակ յատկութիւնը մոռացնել է տալիս նրանց իրանց կոչման նպատակը, անուշադիր թողնելով բաղմաց ձայնը, այն ժամանակ ամեն մի ազնիւ մարդու պարտականութիւնն է մրցել այդպիսի եսասէրների հետ, և մրցել ոքան կարողութիւն ունի: Աչքի առաջ ունենալով այս պարզ ճշմարտութիւնը, ես չեմ կարող լռել մի քանի պատահմունքների մասին, որոնք տեղի են ունենում մեզ մօտ մի հիմնարկութեան մէջ, որին ամեն մէկը իրաւունք ունի իրանը համարել. ես խօսում եմ թեմական դպրանոցի մասին:

Ոքան և զղուելի է ամեն մէկի համար միշտ և հանապազ խօսել անվերջանալի դեղծումների, վատութիւնների մասին, բայց ինչ արած, երբ մեր թղթակիցների վրա ընկած է մի այսպիսի տխուր պարտականութիւն: Ինչ և իցէ: «Մարդն է գործի համար, և ոչ թէ գործն է մարդու համար», ասում է պատուական «Մշակը»-ը և այս դեղեցիկ միտքը ակամայ հարկադրում է ընթերցողին նայել իր շուրջը, համեմատել այս խօսքերը նրա շրջապատող դէպքերի հետ... Ահա այդ իսկ հանդամանքն է հարկադրում այս անգամ գրիչ վեր առնել և մեր կեանքից վեր առած մի քանի փաստերով հաստատել «Մշակի»-ի այդ դեղեցիկ խօսքերը, մանաւանդ որ մեր մէջ կան մարդիկ, որոնք կոյր յամառութեամբ խցում են ականջները և ընդունում են «Մշակ»-ի խօսքերը ոչ թէ ինչպէս ճշմարտութիւն, այլ ինչպէս մերկ խօսքեր: Ի՞նչ ենք տեսնում: Հասարակական պաշտօնեաների ընտրութեան մէջ առաջին դեր է խաղում ոչ թէ որ և է անձի ընդունակութիւնը, հոգեկան արժանաւորութիւնները, ոչ, այլ խնամութիւն, կնքաւորութիւն, առհասարակ բարեկամութիւն: Եթէ բացվում է մի որ և է պաշտօն, դա ոչ թէ ընդունակների համար է, որոնք կարողանային բարեխղճաբար ծառայել նրան, այլ առհասարակ նա ընկնում է մի այսպիսի մարդու ձեռք, որ ազատ է որ և է կօնտրօլից միայն այն պատճառով, որ նա բարեկամ է հիմնարկութեան վարչութեան հետ կամ անձամբ, կամ ուրիշի միջնորդութեամբ: Այստեղ լուսաւորութեան ցէնզը դին չունի, համարեա ոչինչ է: Սրանից դուրս է գալիս այն, որ մեր մէջ ընդունակութիւնը, արժանաւորութիւնը պախարակվում է և ընդունակ մարդն առանց գործի է մնում: Ինչու: Որովհետև այստեղ գործը ստեղծվում է մարդուն ծառայելու համար, որովհետև գործ է բերվում բարեկամական զգացմունքների. գործի առաջադիմութիւնը չէ հետաքրքրում այնքան, ոքան այն հանդամանքը՝ որ գործը ծառայեցնելով որ և է անընդունակ պաշտօնեայի, վճռում են նրա հացի խնդիրը: Զարմանալի է, որ այսպիսի ուղղութիւն միշտ լաւ գործադրութեան լաւ հող չէ գտնում մեր ուսումնարաններում և այն էլ այնպիսի ուսումնարաններում, ուր գործիչներն տուած է գործողութիւնների կատարեալ ազատութիւն, ուր խղճմտանքից և զգացմունքից զուրկ վարչութիւնը ազատ է որ և է կօնտրօլից, որ և է բարձր վերահսկողութիւնից:

Եթէ մէկը չէ կարողանում մի գործ ճարել, իսկոյն ուսուցիչ է դառնում, դիմում է հայ դպրոցները իր համար հաց ճարելու: Բախտաւոր է այնպիսի մարդը, որ ունի իր բարեկամների շնորհիւ որ և է հաստատ հասարակական դրութիւն, ունի անձնական կամ անուղղակի բարեկամութիւն վարչութեան հետ, նա իսկոյն տեղ կը գտնէ: Բայց թէ ընդունակ է նա, կարո՞ղ է ծառայել բարեխղճաբար իր գործին, դա այնքան կարևոր նշանակութիւն չունի: Եւ ահա այս իսկ ուղղութիւնից է առաջ եկել մեր թեմական դպրանոցի այժմեան թշուառ դրութիւնը, ահա այս իսկ յատկութիւնից է առաջ եկել այն հանդամանքը, որ այսօր մի միջնակարգ ուսումնարան կառավարվում է տիրացուական ուսուցչական մի խմբով, որի անդամներից շատերը հասկացողութիւն անգամ չունեն իրանց պաշտօնի մասին (այդ մենք կարող ենք ապացուցանել հարկաւոր ժամանակում): Եւ որ աւելի ցաւալին է, այսպիսի մի տեղ իզուր կորչում են այնպիսի համեստ ուժեր, որոնք ճանաչում են իրանց պաշտօնը, գիտեն ծառայել նրան լաւ: Այո՛, կրկնում ենք, ընդունակութիւնը, արժանաւորութիւնը մեզ մօտ պախարակելի և դատապարտելի են համարվում: Խօսքերս պնդացնում եմ մի փաստով:

Մեր օրիորդական դպրոցում կայ մի համեստ գործիչ—վարժուհի օր. Թաւրիզեանց, որ իր պաշտօնին անձնանուէր էր. նա չունէր բարձրագոյն ուսում, բայց հեռու էր զանազան խմբրիդաներից, կուսակցութիւններից, որոնց մէջ այնքան վարժված են դպրանոցի բոլոր ուսուցիչները. նա սերտ կապված էր իր գործի հետ և կապված էր բարեխղճաբար այն մանուկների հետ, որոնց ապագայ մայր դառնալու խնդիրը յանձնված էր նրան. ամեն կուսակցութեան պատկանող մարդ խոստովանում էր օրիորդի համեստ արժանաւորութիւնները, որոնք կարողանում էին բաւականութիւն տալ նրան իր պարտականութիւնների շրջանում. մի և նոյն ժամանակ օրիորդը չունի ոչ յայտնի ծագում, ոչ զօրեղ բարեկամներ, և դժբախտ էր այս պատճառով: Նա դժբախտ էր և նրանով, որ ունէր ընդունակութիւն, որ յայտնի էր և բարձր էր միւսներից իր արժանաւորութիւններով, որոնք արձագանք գտան մեր լրագրութեան մէջ ևս: Այս լաւ յատկութիւնները յարուցին նրա ընկերակիցների նախանձը, որոնք և սկսեցին սիստեմատիկաբար ճնշեղ, նեղացնել օրիորդին. մի իրողութիւն, որ նա պատկանում էր «հին խմբին», բաւական էր շատերին զանազան ստոր միջոցներ գործադրելու. այդ ճնշումները կազմակերպել էին այն մտքով, որ հարկադրեն օրիորդին զզուել իր պաշտօնից, և ահա ինչեր առաջ եկան: Օրիորդը անկարող եղաւ տանել այդ ճնշումները և ակամայ հարկադրվեցաւ հրաժարվել և այսօր նրա պաշտօնը վարում է մի ուրիշը ստանալով 800 ր. և հինգ սենեակ. իսկ թէ ինչ է սովորեցնում—այդ խնդրեմ մի հարցնէք:

Մարդ քննելով ուսումնարանի մէջ տեղի ունեցող դէպքերը, զարմացքով հարցնում է. «իսկ ինչ է անում տեսուչը»: Նրա «de facto» գոյութիւնը կարող են արտայայտել այս բառերը—նա համարեա չը կայ: Նա թէպէտ և ցուցակում նշանակվում է իբրև տեսուչ, բայց փոխանակ ղեկավարելու ուրիշներին, ինքն է ղեկավարվում ուրիշներից: «Գործը պիտի ծառայէ մարդուն», ահա այն կանոնը, որին հետևում են ամենքը այստեղ. ոչ ոքին փոյթ չէ թէ պաշտօնից հրաժարվում է բարեխիղճ գործիչը. ոչ ոք չէ ուզում իմանալ պատճառները և հոգաբարձուները անվրդով խղճով ընդունում են հրաժարականը և այսօր կամ էգուց նրա տեղը կը բռնէ մի խնամի, մի սանամայր: Իսկ գործը. այդ ոչինչ է: Իսկ տիրացուական խումբը (բացառութիւններ քիչ կան) օրից օր ամրացնում է իր դիրքը, օրից օր հաստատվում է, թէպէտև ծիծաղի առարկայ է դառել նոյն իսկ աշակերտների և աշակերտուհիների ձեռքին: Բարոյական կրթութիւնը միշտ հեռու է այսպիսի ուսումնարաններից: Թող ամեն մի անարժան մարդ չը մտնի լուսաւորութեան տաճարը և չը խանգարէ նրա դրութիւնը իր տգիտութեամբ. եթէ չը կայ ուրիշ տեղ, թող նա գնա արհեստ սովորի, դրաչար դառնայ, դրագիր դառնայ, բայց հեռու լինի այնպիսի պաշտօնից, որ այնքան պահանջում է նուրբ զարգացած խելք, հասկացողութիւն և վերջապէս մասնագիտութիւն: Միթէ ուսումնարանները մի անկելանոց է, միթէ նա մի բարեգործական հիմնարկութիւն է, ուր պաշտօններ են տրվում լոկ անձնական ապահովութեան անունով: Մենք նախանձախնդիր ենք ուսումնարանի բարեկեցութեան, մեզ համար անձնաւորութիւնը նշանակութիւն չունի. մենք միայն գործի բարեկարգման պայմաններ ենք պահանջում և եթէ կը շարունակվի այս դրութիւնը, մենք հարկադրված կը լինենք մի քանի անգամ էլ խօսել այս առարկայի մասին, մերկացնելով հասարակական կարծիքի դատաստանի առջև ամեն մէկի գործունէութիւնը: Տացէ Աստուած, որ այս դանդատը վերջինը լինի մեր ուսումնարանի վրա:

Գաւառացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են Լօռու գաւառի ՇԱՀՆԱԶԱՐ հայ-կաթոլիկ գիւղից հետևեալը: «Մեր գիւղը տնտեսապէս այժմ շատ ծաղկած դրութեան մէջ է, շնորհով այն հանդամանքի, որ գիւղացիները մի հինգ տարի առաջ, ընդհանուր հաշուով գնեցին մասնաւոր կալուածատէրերից ահագին հողեր, որ և դարձրին գիւղի համայնքի հողեր: Այժմ իւրաքանչիւր գիւղացու վրա այդ գիւղում ընկնում է 15 դեսեատին հող և ամեն մի տան մէջ կայ երկու գութան, որ կը նշանակէ թէ նոյն տան մէջ 36 գլուխ եզ կայ: Շահնազարցիները դարձեալ ուզում են գնել հողեր:»

—

Այս օրերս հասաւ Թիֆլիս նոր ընտրված տեսուչ Ներսիսեան ազգային-հոգևոր դպրոցի, պ. Սօլոմոն Եղիազարեան և արդէն սկսեց վարել իր պաշտօնը: Պ. Եղիազարեան Մօսկվայից է գալիս, որտեղ նա մի քանի տարի առաջ աւարտել է համալսարանական ուսումը:

—

ՑԱՐՍԿԻԵ-ԿՕԼՕԴՅԻ տեղի նորաշէն եկեղեցու հոգաբարձուները խնդրում են տպել հետևեալը: «Սղնախի գաւառի Ցարսկիե-Կօլօդցի հայ հասարակութիւնը, չունենալով եկեղեցի, ստիպված էր իր հոգևոր պիտոյքները կատարել մասնաւոր տան մէջ և բերել տալ քահանային 30 վերստ հեռաւորութիւնից, որ շատ անյարմարութիւն էր ներկայացնում մեծ պասի կամ տօների ժամանակ: Այս անյարմարութեան և դժուարութիւնների առաջն առնելու նպատակով, մեր փոքրիկ հայ հասարակութիւնը վճռեց իր համար մի եկեղեցի կառուցանել, յոյս դնելով իր մօտիկ և հեռաւոր

պերի հետ և գտնում է նրանց մէջ կատարեալ նմանութիւն: Վեր առնենք նրա համեմատութիւններից մի կտոր միայն.

«Այսպէս ընթերցող, գրում է պ. Հայկունին, «կայծերի» ամենազլխաւոր գործողը—ասենք տիպը—որսորդ Ավօն, ոչ այլ ոք է, եթէ ոչ ա) պ. Աբովեանի Աղասին, բ) պ. Աղայեանցի Ցարութիւնը, գ) պ. Պռօշեանցի Վարդը. դ) պ. Ծերենցի Թէոդորոս Ռշտունին և նոյն հեղինակի Լևոնը («Թորոս Լևոնի» մէջ) և զ) պ. Բաֆֆիի իրան Մելիք-Մանսուրը («Խենթի» մէջ):

Եթէ պ. Հայկունու համեմատութիւնները ճշմարիտ համարենք, մենք կամայ-ակամայ պէտք է հաստատենք այն եզրակացութեանը, որ մեր յարգելի վիպասանները, ամենքն էլ, առանց բացառութեան, իրանց տիպերը գողացել են միմեանցից: Շատ հետաքրքիր կը լինէր, եթէ պ. Հայկունին ցոյց տար, թէ առաջին գողութիւնը ո՞րն է կատարել դրանցից:

Ես այդ կարծիքը չունեմ մեր վիպասանների մասին, ես միայն պիտի երևան հանեմ պ. Հայկունու անբարեխղճութիւնը: Նա աշխատելով ըստուեր ձգել «կայծերի» վրա, մոռանում է, որ մի և նոյն ժամանակ ստուեր է ձգում և մեր միւս վիպասանների վրա: Մի կողմից ասում է նա, թէ «կայծերի» և մեր միւս վիպասանների դուրս բերած տիպերի մէջ ոչինչ «էական» զանազանութիւն չը կայ, իսկ միւս կողմից, ասում է, թէ «կայծերի» մէջ գործողները «իրական» մարդիկ չեն, այլ «վերացական» և «երևակայական» են: Ուրեմն, եթէ «կայծերի» վերացական և երևակայական տիպերը մի և նոյնն են, ինչ որ մինչև այսօր յայտնվել են մեր միւս վիպասանների աշխատութիւնների մէջ,—բոլորովին լոգիկական կը լինէր մտածել, որ նրանք ևս իրական տիպեր չեն, որ նրանք ևս վերացական ու երևակայական են, որովհետև, պ. կրիտիկոսը նրանց և «կայծերի» տիպերի մէջ ոչինչ «էական» զանազանութիւն չէ գտնում: Եթէ ճշմարիտ է այդ, շատ թշուառ պէտք է համարել մեր գրականութիւնը, և նոյնքան թշուառ պէտք է համարել մեր բոլոր վիպասաններին, որ նրանցից ոչ մէկը մինչև այսօր չէ կարողացել է մի իրական և կենդանի տիպ դուրս բերել իր աշխատութեան մէջ:

Այդ բոլոր հակասութիւնները առաջ են գալիս նրանից, որ պ. կրիտիկոսը չէ հասկանում, թէ ինչ է ասում: Նա գործ է ածում բառեր, առանց նրանց նշանակութիւնը հասկանալու, և դ ամենանշանաւորն է, նրա դատողութիւնների մէջ ամենևին լոգիկա չը կայ: Այդ ես ցոյց տուի և դարձեալ պիտի աշխատեմ ցոյց տալ:

Կարծեմ ընթերցողը չէ մոռացել, որ պ. Հայկունին ասաց, որ «կայծերը» ոչ պատմական վէպ է, և ոչ ժամանակակից: Ուրեմն ինչ համեմատութիւն կարող է լինել «կայծերի» և Ծերենցի, Աբովեանի, Աղայեանցի կամ Պռօշեանցի վէպերի մէջ: Չէ՞ որ Աբովեանի «Վէրք Հայաստանի», Ծերենցի Թէոդորոս Ռշտունի, նրա «Երկունք» և «Թորոս Լևոնի» կոչված վէպերը պատմական վէպեր են, նրանց մէջ գործողները պատմական անձնաւորութիւններ են, նրանք ապրել և գործել են մեզանից շատ դարեր առաջ, նրանք գտնվել են կեանքի բոլորովին ուրիշ պայմաններում: Իսկ «կայծերը», պ. Հայկունու ասելով, պատմական վէպ չէ, «կայծերի» տիպերը դեռ նոր պէտք է ծնվեն: Ուրեմն ինչպէս կարող էին դրանք նման լինել Աբովեանի և Ծերենցի դարերով առաջ ապրող տիպերի հետ: Բայց դրանցից, Պռօշեանցի վէպերը, Աղայեանցի վէպերը (բացի «Անահիտից») ժամանակակից կեանքից են առնված: Իսկ պ. Հայկունին ինքը ասում է, թէ «կայծերը» ժամանակակից վէպ չէ, այլ մի ծրագիր է տաճկահայերի ապագայ գործունէութեան: Եթէ այդպէս է, ուրեմն էլ ինչպէս կարելի է, որ դեռ նոր ծնվող ապագայ կեանքը իր նոր պայմաններով, իր նոր սերունդով ներկայի նման լինի:

Այդ հակասութիւնները պ. Հայկունու յղացածի մէջ առաջ են գալիս երկու պատճառներից, նախ, անբարեխղճութիւնից, երկրորդ, տգիտութիւնից: Անբարեխղճութիւնից ասում եմ նրա համար, որ պ. կրիտիկոսը կամենում է ցոյց տալ, թէ «կայծերի» մէջ նոր տիպեր չը կան, թէ Բաֆֆին իր բոլոր տիպերը գողացել է մեր գրականութեան մէջ արդէն վաղուց լոյս տեսած այս և այն վէպից: Իսկ տգիտութիւնից ասեցի այն պատճառով, որ պարոնը այնքան զարգացում չունի, որ հասկանայ թէ ինչ է տիպը կամ ինչով է զանազանվում մի տիպ միւսից:

Պ. Հայկունու տգիտութիւնը կազատէր իրան, եթէ նա այսքանը միայն ասէր, թէ «կայծերի» տիպերը նման են Աբովեանի, Աղայեանցի, Ծերենցի և Պռօշեանցի տիպերին, բայց նա մի բոլորովին աններելի համեմատութիւն էլ է անում, որը, եթէ մատնութիւն չանուանենք, կատարեալ զրպարտութիւն է, չարամիտ բամբասանք է: Ահա նրա խօսքերը.

—«Սպասեցէք, սպասեցէք, պարոններ, բղաւում է պ. Հայկունին,—ես գիտեմ, որ Որսորդ Ավօն և ընկ. («կայծերի» մէջ) ուզում են լինել և կարծես թէ են նաև մի... մի Միլօրդ, մի Ժ...օֆ, մի Կ...իչ, մի Դ...ի et tuti quanti»... Մտածում է պ. Հայկունին, թէ ինչ սարսափելի և մեր ամենխս համար անհամակրելի անուններ են թաղնված յիշեալ դէմատառերի տակ...

Եթէ «կայծերի» տիպերը մի-մի Միլօրդներ, մի մի Ժ...եր, Կ...եր, Դ...եր են, ուրեմն և Աբովեանի, Ծերենցի, Պռօշեանցի, Աղայեանցի տիպերն էլ մի և նոյնը պէտք է լինեն, որովհետև, որպէս վերևում ցոյց տուինք, պ. կրիտիկոսը «կայծերի» տիպերի և յիշեալ չորս վիպասանների տիպերի մէջ ոչինչ «էական» տարբերութիւն չէ գտնում: Արդեօք իր այդ համեմատութեամբ պ. Հայկունին ցուդայի համբոյրով չէ՞ մերձենում դէպի մեր յարգելի վիպասանները ընդհանրապէս և դէպի Բաֆֆին մասնաւորապէս...

Ինձ ասեցին, պ. Հայկունուց հարցրել են, թէ ինչու էք այդ տեսակ յիմարութիւններ գրում: Նա առանց կարմրելու (սև երեսի վրա կարմրութիւնը չէ երևում, պարոնի երեսը բաւական սև է) պատասխանել է. գրում եմ նրա համար, որ Բաֆֆիի գրքերը չը ծախվեն:

Բոլորովին երեխայութիւն կը լինէր մտածել, որ ոչ թէ պ. Հայկունու յօդուածի նման այլանդակ յօդուածը, այլ ծանր, հիմնաւոր և ամենազօրեղ կրիտիկան անդամ իր որոտալից սաստկութեամբ կարող կը լինէր սպանել ճշմարիտ տաղանդը: Այլ ես ինչ բանաստեղծ կը լինէր Բաֆֆին, եթէ զոյլերի բարբաջմունքը կը ստիպէր նրան լռել, և նրա գրքերը դէպի փողոցը կը նետվէին ընթերցողների լուսամուտներից: Ազգերի գրականութեան մէջ հաղիւ կարելի է ցոյց տալ այս և այն նշանաւոր բանաստեղծին, որ իր ժամանակին ենթարկված չը լինէր անբարեխիղճ կրիտիկոսների յարձակմունքներին: Բայց դրանով ոչինչ չը կորցրին այդ բանաստեղծները, յարձակմունքները աւելի բորբոքեցին նրանց եռանդը: Թշնամիները կորան, ոչնչացան, անյայտացան մոռացութեան խաւարի մէջ, բայց բանաստեղծի գործը և անունը մնաց անմահ: Ճշմարիտ բանաստեղծը խիստ հաստատ հաւատ ունի դէպի իր կոչումը, և եթէ կրիտիկան անիրաւացի կերպով է վերաբերվում դէպի նա, դրա փոխարէն նա գտնում է սաստիկ պաշտպանութիւն ընթերցող հասարակութեան համակրութեան մէջ: Եւ այդ համակրութիւնը վայելում է Բաֆֆին, որի ընդհակառակն, հասարակութեան անհամակրութիւնը, կարծեմ, իր անձի վրա փորձեց պ. Հայկունին, որպէս ինքն ևս խոստովանվում է այդ...

Բաֆֆիին և նրա աշխատութիւնները քննելը դուրս է իմ յօդուածի նպատակից, բայց այստեղ չեմ կարող մի փոքրիկ նկատողութիւն չանել: Ցարակոյս չը կայ, որ բանաստեղծը և հասարակութիւնը պէտք է գտնվեն միմեանց հետ թշնամական յարաբերութիւնների մէջ: Այդ թշնամութիւնը աւելի սաստկանում է այն դէպքերում,

եղբայրների օժանդակութեան վրա։ Մարիամ ս. Աստուածածնայ անունով եկեղեցու շինութիւնը արդէն սկսել ենք, բայց շատ կարճ միջոցում կընդհատվի դրա կառուցումը նիւթական միջոցների սպառվելու պատճառով, որովհետև մեր սակաւաթիւ ժողովուրդը չէ կարող միայն իր միջոցներով աւարտել եկեղեցու շինութիւնը։ Ուստի դիմում ենք մեր ողորմած և բարեսիրտ եղբայրակիցներին և խնդրում ենք նրանց օգնել զինուորական ցարսկիե-Կոլոդցիում հայոց եկեղեցու կառուցմանը։ Օգնել ցանկացողները կարող են դիմել այս հասցէով. Попечительству по постройкѣ Армянской церкви, Царскіе-Колодцы. Խընդրում ենք մեր հայ լրագիրներին արտատպել մեր այս աղերսագիրը իրանց լրագիրներում։»

—

«Тифл. Объявл.» լրագիրը հաղորդում է որ բժշկապետ Գասպարեանց մի քանի օրով ուղևորվեց Շուշի քաղաքը, այնպէս որ մի քանի օր չարունակ հիւանդների ընդունելութիւն չի լինի նրա մօտ։

—

Սեպտեմբերի 20-ին Ս. Պետերբուրգում կայացաւ, ինչպէս հաղորդում է «Русс. Вѣд.» լրագիրը, կանանց բարձր կուրսերի տարեդարձը և հրապարակական ակտը։ Ներկայ էին պրոֆէսսորներ, պատաւոր հիւրերից շատերը և աւարտող ու վերին կուրսերի ուսանողուհիները։ Տարեկան հաշվից երևում է, որ մայիս ամսին վերջնական քննութիւն տուին մաթեմատիկական բաժնում 7 օրիորդներ, բնագիտական բաժնում 26 և լեզուագիտական բաժնում 44 օրիորդներ։ Ակտը վերջացաւ պրոֆէսսոր Միլլերի ճառով, որ նա նուիրեց Ցուրգենեվի յիշատակին։ Պրոֆէսսորը վերջացրեց իր ճառը մաղթելով ուսում աւարտող օրիորդներին աջողութիւն կեանքի մէջ, աջողութիւն իրանց օգտաւէտ գործունէութեան մէջ, հասարակական կեանքի ասպարիզում։

—

Ուրքան մեզ յայտնի է, հայ նկարիչ պ. Գ. Բաշինջաղեանը այս տարի ճանապարհորդելով զանազան տեղեր՝ թէ հին Հայաստանում և թէ ընդհանրապէս Կովկասում, կազմել է հաւաքածու իւղաներկ նկարների, որոնց մի քանիսը տեսնելու առիթ ունեցանք նոյն իսկ նորա բնակարանում։ Նորա նկարած «Արարատ լեռը արևածագի ժամանակ» և այլ մի քանի պէյզաժներ, ի թիւս որոց և հայ հասարակութեան արդէն ծանօթ «Գեղամայ լիճը», մեր կարծիքով շատ յաջողված են։ Երիտասարդ նկարիչը այս հոկտեմբեր ամսի 1-ից սկսած, ցոյց է տալու հասարակութեան, արդէն պատրաստի ունեցած բոլոր նկարները իր բնակարանում, Դը-վօրցօվայա փողոց, տուն Ծովանօվի և Սարաջևի № 8 վերին յարկում։ Ուրքան մենք կարողացանք ճիշտ տեղեկանալ, մուտքը ձրի է և այցելուները ընդունվում են ամենայն օր առաւօտեան ժամը 10—4 երեկ., իսկ տօն և կիրակի օրերին առ. ժամը 9—3 երեկոյեան։ Ցանկալով կատարեալ յաջողութիւն երիտասարդ նկարչին իր ձեռնարկութեան մէջ, յոյս ունենք, որ Թիֆլիսի հասարակութիւնը անուշադիր չի թողնի յարգելի նկարչի գործը և ձեռնհաս մարդիկ կամ հասարակական հիմնարկութիւնները գնելով նորա նկարներից, խրախոյս և քաջալեր կը դառնան թէ նորա ապագայ գործունէութեան, և թէ միջոց տուած կը լինեն նորան, սիրով գործելու յօգուտ նոյն հասարակութեան շահերի՝ որին ինքը պատկանում է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Новое Время» լրագրի Լոնդոնի թղթակիցը գրում է հետևեալը սեպտեմբերի 17-ից։ «Երէկ «Daily News» լրագրում տպվեցաւ հետևեալ հեռագիրը Դուբլինից. «Մեծ յուզմունք պատճառեց այսօր Դուբլինում տարածված այն լուրը, որ Պարնէլին սպանել է մի օրանժիստ։ Ըստ երևոյթին, այդ լուրը մասամբ հիմք ունի, և հաստատ հաւաստի է, որ Պարնէլ վիրաւորված է։ Մի քանիսները ասում են, որ գնտակը պատահմամբ է դիպել։ Մանրամասնութիւններ չը կան։» Որպէս և պէտք էր սպասել, այդ հեռագիրը այստեղ մեծ տպաւորութիւն գործեց։ Լրագիրները իրանց ամեն համարների մէջ տպում էին մանրամասնութիւններ այդ անց.քի վերաբերութեամբ։ Հեռագիրը երկար ժամանակ մեծ եռանդով աշխատում էր առանց որ և է հետևանքի, մինչև որ վերջապէս ճիշտ տեղեկութիւններ ստացվեցան Պարնէլի մասին, որոնք ցոյց են տալիս թէ այդ պիսի զարմանալի արագութեամբ տարածված և անհիմն տպաւորութիւն անող լուրը անհիմն է։ Պարնէլի մահը կատարեալ դժբաղդութեան կը լիներ թէ Իրլանդիայի և թէ Անգլիայի համար։ Այդ խոստովանում են մինչև անգամ Պարնէլին թշնամի անգլիական լրագիրները։ «Իրաքանչիւր մարդ, ասում է այսօր «Times» լրագիրը, կուրախանայ, լսելով, որ Պարնէլի սպանութեան լուրը սխալ է»։ Այդ ասում է այն լրագիրը, որ դեռ նորերումս իրլանդական յուզմունքների և անկարգութիւնների բոլոր պատասխանատուութիւնը դընում էր Պարնէլի և նրա կուսակցութեան վրա։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 29 սեպտեմբերի։ „Դիմ-ֆա“ նաւը, որ մասնակցում էր բևեռային արշաւանքին և կորած էր համարվում, հասաւ Նորվեգիայի Վարդօ նաւահանգիստը։

ՊԵՇՏ, 29 սեպտեմբերի։ Ունգարական սէյմի ներկայացուցիչների ժողովը ընդունեց մինիստր-նախագահ Տիսսայի առաջարկած վճիռը, որ իրաւունք է տալիս կառավարութեանը պոկել պաշտօնական նոր յայտագրերը, իսկ որտեղ նրանք հարկաւոր կը լինեն՝ նորերը կպցնել առանց որ և է դրուագքի։

ՎԻԵՆՆԱ, 29 սեպտեմբերի։ Այստեղ ըստացվեցաւ Բ. Դրան վաւերացումն երկաթուղիների միացման վերաբերեալ դաշնագրի։ Վաւերացումների փոխանութիւնը կը կատարվի Սերբիայից և Բոլգարիայից դօկումենտների ստանալուց յետոյ անմիջապէս։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 սեպտեմբերի։ Ներկայ տարվայ ընթացքում գլխաւոր շտաբի ակադեմիայի մէջ կընդունվեն 122 օֆիցերներ։ Ծովային բաժնի ծախսերը 1884 թուականի համար հաշուած են 38,451,799 ր. անցեալ տարվանից 8,263,215 ր. աւելի։ Ս. Պետերբուրգի Բօրսային մասնաժողովը մրցումն յայտնեց Հանգուցեալ Ալէքսանդր II կայսրի կիսարձանի համար, որ պէտք է դրվի բօրսայի դահլիճի մէջ։ Երկկ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի և ներքին գործերի մինիստրի օգնական Դուրնովոյի ներկայութեամբ կայացաւ քաղաքական արժանաւոր աստիճանաւորների այրերների և որբերի ապաստանարանի օծումն։ Լրագիրները հաղորդում են, որ եկող 1884 թուականի յունվարից Ֆինանսների մինիստրութիւնը կը սկսի մի լրագիր հրատարակել, որ նուիրված կը լինի ռուսաց առևտրի և արդիւնաբերութեան շահերին։

ԿԱՑԻՐԷ, 29 սեպտեմբերի։ Հրատարակված է խեդիվի հրովարտակը ներման մասին։

ՄՕԳԻԼԷՕՎ-ՊՕԴՕԼՍԿԻ, 29 սեպտեմբերի։ Այստեղի վարչութեան մէջ զեղծումներ են յայտնված զինուորագրութեան գործերի վերաբերութեամբ։ Այդ զեղծումներին մասնակցել են մի քանի անձինք, որոնք զինուորագրութենից ազատվել ցանկացող հրեաների համար կեղծ վկայականներ են պատրաստել։

ԻՐԿՈՒՏՍԿ, 29 սեպտեմբերի։ Այստեղ տաք և չոր եղանակ է։ Այսօր ստուերի մէջ 16° տաքութիւն կար։ Սեպտեմբերի 27-ին աննշան երկրաշարժ կար։

ՄԱԴՐԻԴ, 29 սեպտեմբերի։ Մինիստրութիւնը հրաժարական տուաւ։

ՓԱՐԻԶ, 29 սեպտեմբերի։ Հերքվում են այն լուրերը, որ իբր թէ կառավարութիւնը շրջաբերական է ուղարկել Ֆրանսիական կառավարութեանը Ալֆոնս թագաւորին վիրաւորելու առիթով։ Գործը սահմանափակվեցաւ մինիստր Ֆերրիի և սպանիական դեսպանի մաքերի բարեկամական փոխանակութեամբ։

ՍՕՖԻԱ, 29 սեպտեմբերի։ Ազգային ժողովը մտնելու ժամանակ մինիստր Նաչեվիչ յարձակմունքի ենթարկվեցաւ մի անյայտ մարդու կողմից, որ մինիստրի վրա ռէվոլվեր արձակեց և չը կարողացաւ նրան խփել։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

երը բանաստեղծը չէ շողոքորթում հասարակութեան անբարոյական ընազդումներին, հարուածում է նրա մոլութիւնները, խորտակում, ոչնչացնում է նրա նախապաշարմունքները, և զօրեղ ձեռքով բարձրացնելով այն դարևոր վարագոյրը, որ ծածկում էր ժողովրդի կեղտերը, մերկացնում է նրա այլանդակութիւնը։ Մեր գրականութեան մէջ Բաֆֆիի աշխատութիւնները այդ բնաւորութիւնը ունեն, նրանք սաստիկ կրիտիկաբար են վերաբերվում դէպի ժողովրդի կեանքը, և անխնայ կերպով հարուածում են նրա մոլութիւնները։ Բընականաբար պէտք է ժողովուրդը ատէր նրան, բայց մենք ընդհակառակն ենք տեսնում. նա յարգված է, և նրա գրքերը սիրով կարդում են։ Երկու կերպով կարելի է բացատրել այդ երևոյթի պատճառը, կամ ժողովուրդը այնքան զարգացած է, որ հասկանում է նրան, կամ նա այնքան ուժ ունի, որ հասարակութեան զայրացած կրքերը ճնշում է, խոնարհեցնում է իր տաղանդի ծանրութեան ներքոյ։

Հիմա դառնանք դէպի պ. Հայկունու այն նկատողութիւնները, որոնցմով նա «Կայծերի» մէջ հակասութիւններ, անբնական երևոյթներ և զանազան սխալներ է ցոյց տալիս։

Պ Հայկունին իր քննադատութիւնների մէջ մի խորամանկ, բայց կրիտիկայի կանոններին բոլորովին հակառակ ձև է ընդունել։ Նա «Կայծերի» տիպերը չէ քննում առանձին-առանձին, այլ բոլորին ձուլում է, միացնում է հեղինակի անձնաւորութեան մէջ, և նրանց կոչում է Բաֆֆի, անդադար կրկնելով, Բաֆֆին այդ ինչպէս կարի է յայտնում, Բաֆֆին ինքն իրան հակառակում է և այլն։ Եւ այդպիսով աշխատում է ցոյց տալ հակասութիւններ։ Շատ հասկանալի է, ինչպէս ամեն վէպի մէջ, այնպէս էլ «Կայծերի» մէջ կան զանազան տիպեր, զանազան անձնաւորութիւններ իրանց տարբեր, և մինչև անգամ միմեանց հակառակ հայացքներով ու կարծիքներով։ Եթէ բոլորը միանման լինէին, այլ ևս տիպերի զանազանութիւն չէր լինի։ Նրանց զարգացման և հասկացողութեան աստիճանը հաւասար չէ։ Կարող է պատահել, և պէտք է այսպէս էլ լինի, որ մէկը բոլորովին սխալ և մինչև անգամ վնասակար միտք է յայտնում, այդ մտքին գուցէ հեղինակը ինքն էլ չէ համակրում, այսուամենայնիւ, պէտք է իր հերոսին խօսել տայ այնպէս, որպէս ինքն հերոսն է մտածում կամ զգում։ Բայց բոլոր գործող անձինքների մտածողութիւնները, խօսքերը անխտիր կերպով վերաբերել հեղինակին, և նրանց համեմատութիւններից եղրակացութիւններ դուրս բերել,—այդ, ի հարկէ, միշտ սխալ հետևանքի կը հասցնէ։ Ինչու։ Որովհետև վէպի մէջ լինում են, ինչպէս ասեցի, միմեանց հակառակ տիպեր, թէ բնաւորութեամբ և թէ զարգացումով։ Լինում են յետադէմներ և յառաջադէմներ, խաւարամիտներ և աղատամիտներ, խելացիներ և յիմարներ։ Եթէ կրիտիկոսը կը վեր առնի մի խելացիի կարծիքը և մի յիմարի կարծիքը, և երկուսն էլ համարելով հեղինակի կարծիք, կը համեմատէ միմեանց հետ, շատ հասկանալի է, որ հակասութիւն կը դուրս գայ։ Իմ կեանքում այդ խարդախ ձևը ես ոչ մի կրիտիկայում չեմ տեսել, բացի պ. Հայկունու կրիտիկայից։ Նրա համար տիպերի տարբերութիւն չը կայ։ Ով ինչ խօսում է «Կայծերի» մէջ, ով ինչ միտք է յայտնում, թէ լաւ, թէ վատ,—բոլորը հեղինակին է վերաբերում։ Մինչև անգամ քրդերի և թուրքերի հայհոյական խօսքերը հայերի վերաբերութեամբ, նրա կարծիքով, Բաֆֆիի բերնից են դուրս գալիս։

Ահա մի օրինակ.

«Ընթերցող, պ. Բաֆֆին յափշտակված է ամբոխով, նա նրանում գտնում է մեծ զօրութիւն և բաւականանում։ Շատ սիրուն։ Բայց ահա մի և նոյն պ. Բաֆֆին գտնում է նոյնպէս, որ հայ (ամբոխը) մի կոյր հաւի սիրտ չունի (եր. 350), որ հայը աղբի ջրաղաց է, պէտք է զցել նրան մի տոպրակի մէջ և խփել պատին, որ երկու աչքերն էլ կուրանան» (եր. 105)։

Պ. Հայկունու զրպարտութիւնները ցոյց տալու համար, ես ամբողջապէս կը բերեմ «Կայծերից» այն կտորը, որտեղից նա առել է վերոյիշեալ խօսքերը։

«Պատահում էին այսպիսի դէպքեր (ասում է Ֆարհաղը) և այդ դէպքերը կրկնվում էին խիստ յաճախ։ Ամեն երեկոյ, երբ (հայ) աշակերտները դպրոցից վերադառնում էին իրանց տները, մահմեդականների փողոցներից անցկենալու ժամանակ, հաւաքվում էին թուրքերի, պարսիկների երեխաները և ծեծում էին հայ երեխաներին։ Ես մինչև այսօր չեմ մոռացել մի երգ, որ հնարել էին նրանք և մեզ տեսնելու ժամանակ երգում էին։ Նրա բովանդակութիւնը մօտաւորապէս այս էր. «Հայը աղբի ջրաղաց է, պէտք է զցել նրան տոպրակի մէջ և խփել պատին, որ երկու աչքերն էլ միասին կուրանան»...Մենք ուրախ էինք լինում, երբ մեր վիրաւորանքը վերջանում էր այդ նախատական խօսքերով։ Բայց նրանք ծեծում էին մեզ։ Աշակերտները զանգատվում էին իրանց ծնողներին, բայց ինչ կարող էին անել ծնողները։ Մեծերը ծեծվում էին մեծերից, իսկ փոքրները փոքրներից»...(եր. 105)։

Հիմա նայեցէք, պ. Հայկունին թուրք և պարսիկ երեխաների վարմունքը, նրանց հայհոյանքը վերաբերում է «Կայծերի» հեղինակին, և ասում է, թէ Բաֆֆին հայ ամբոխին աղբի ջրաղաց է կոչում և այլն։

Մի այլ օրինակ.

—«Կայծերի» հեղինակը միշտ պնդում է, որ հայի սիրտը «հաւի սիրտ է», իսկ քրդինը առիւծի։ Շատ սիրուն։ Բայց ահա մի հայ աքաղաղ (կարօն) մէն մինակ 50 հոգի քուրդ աւազակներին հրամայում է տեղերիցը չը ժաժ գալ և այդ առիւծները «ընդունում են և՛ (Կարօի) վերջին պայմանը» (եր. 253)։ Եթէ այդ ճշմարիտ է, այն ժամանակ ով է հաւը, պ. Բաֆֆի, յիսուն քուրդը, թէ մի հայը։ Քաղաճ՞ն, պ. Բաֆֆի, գրուստ քաղաճ՞ն։

Տեսնում էք, ինչ գեղեցիկ խօսքերով է վերջացնում պ. կրիտիկոսը իր նկատողութիւնը։ Նա վերցնում է մի երկու բառ վէպի այս երեսից, մի քանի բառ վէպի մի այլ երեսից, խառնում է միմեանց, ինքը «քաղաճ՞ն» է շինում, յետոյ սկըսում է հեղինակին ծաղրել։ Նախ սուտ է, որ Բաֆֆին իր գրքի մէջ որ և իցէ տեղում ասած լինէր, թէ հայի սիրտը հաւի սիրտ է. այդ ասում է քուրդը (250) և ոչ թէ Բաֆֆին։ «Կայծերի» մէջ հեղինակը, սկսեալ գրքի սկզբից մինչև վերջը, ամենևին չէ խօսում։ Խօսում են, դատում են, կարծիքներ են յայտնում միայն գործող անձինքը։ Ի՞նչպէս կարելի է գործող անձինքների, մանաւանդ թշնամի քուրդի ասածը հեղինակին վերաբերել։ «Կայծերի» մէջ մի տեղում (եր. 346) մի քուրդ աղջիկ ասում է, թէ «հայը շուն է»։ Պ. Հայկունու լոգիկայով այդ ասողը Բաֆֆին է, ինչպէս նոյն պ. Հայկունու լոգիկայով հայերին «աղբի ջրաղաց» կոչողը Բաֆֆին էր։ Երկրորդ, սուտ է, որ Կարօն «մէնմինակ» 50 հոգի քուրդ աւազակներին զսպում է, քանի որ Կարօի հետ էին և նրա ընկերները (249—253)։

Պ Հայկունին ոչ միայն «Կայծերի» մէջ գործող անձինքներին նոյնացնում է հեղինակի անձնաւորութեան հետ, այլ նրանցից մի քանիսին համարում է հեղինակի հայրը, մայրը, քոյրերը և այլն։

«Ինձ այնպէս է թւում թէ զուք, պ. Բաֆֆի, ձեր կուրծքի վրա զգում էք այն ծանրութիւնը, որի տակ այսքան դարեր տնքտնքում ու հեծեծում են տաճկահայերը, ձեր հայրը—Սահակը, ձեր մայրը—Նիզարը, քոյրերդ—Մարիամն ու Մաղթաղը...»

Այդ արդէն լրութիւն է։

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ հոգաբարձական խորհրդարանում հոկտեմբերի ամսոյ 12-ին, երեկոյեան 7 ժամին, լինելու է ածուրդ (առանց կըրկնաձրդի) կապալով տալու հին Դպրանոցի ներքնայարկի 32 կրպակները։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամ։

1—3

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Հետևեալ մէկ արարուածով կատակերգութիւնները.

Էլ չարէս ինչ կամ երկու սիրահար	35 կ.
Մօդա	40 »
Կառապատճառը ես էի	55 »
Խէչոյի թուղը	35 »
Սէր կամ մահ	35 »

Դիմել. ԷՐԻՎԱՆ, Эмину Теръ-Григорянцу.

8—10

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ դաշնամուրի վրա ամսական 5 ռուբլով 8 ԴԱՍԻ համար։ Դաշնամուր չունեցողները կարող են դասերը ինձ մոտ ՊԱՏՐԱՍՏԵԼ։ ԺԱՄԵՐՈՎ դաս առնողները ժամին 1 ռուբլ են վճարում։ Հասցէն. Սօլօլակայա փողոց, տ. աւագ քահանայ Օրբելիի № 16։ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ ամեն օր 11—2 ժամը։

2—2 (չ. և շ.)

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻԶՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակոպիտ թղթի վրա։

Միակ գործակալ **ԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** տեղը կան ամենրի համար մեծ **ԳՐԻԶՆԵՐ** էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱՔՆԵՐ, զմուռ, ՄԱՐԻՉՆԵՐ, պենալ, ՆԵՐ, ծխախոտի ՆԵՐ, ածելիք, սՆԵՐ, ԲԱԶԿԱԹՈՌԲարկու կախելու ՏԻՆԵՐ, անօտներ, բրիտանական մետալից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, Ջրամաններ, երես լուանալու ամաններ, ֆիլտրա, կրանշվոցներ, այգու մկրատներ, շորի շչէօտակգլխի, երկաթէ թելերից, ձիու համար։ Մակենաօշներ։ Բժշկական թուղթ վատերկլօզնոտի համար և այլն և այլն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ։

50—100

ԱՐԿԱԹԷ



ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ

Մի հոգու համար 8 ռուբլուց, երկու հոգու համար 14 ռ., մահճիձներ ծովային խոտով լցված 6—9 ռ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։** Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատառաքաղներ և երկաթէ ԳՐԻԶՆԵՐ, կողպէքներ, թերիվ, տղամարդկերանց և կանանց ԹԱՄԲԵՐ, մատուցարաններ, ԿԼԷՕՆԿԱ, ռէվոլվերներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալբոմներ, կոնֆեկտներ, թէց 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։

94—100



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.		ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Բաթում. .	—	8— „ առ.	Բագու. . .	—	10—23 առ.
Սամտրեդի.	12— 2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Ռիօն . . .	1— 9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ . .	6— 8	6—11 երեկ.	Գօրի . . .	10—56	11— „
Միխայլօվօ.	6—23	6—33	Միխայլօվօ.	12—26	12—46
Գօրի . . .	7—53	8— 2	Սուրամ . .	12—58	1— 1
Թիֆլիս . .	10—25	11—11	Ռիօն . . .	5—54	6— 9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամտրեդի.	7— „	7—20
Բագու. . .	8— 8 երեկ.	—	Բաթում. .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ ԵՎ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Սուրամ. .	—	1—38 գիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլօվօ.	1—50	2— 5	Գօրի. . .	6—30 երեկ.	6—41
Գօրի. . . .	4— 6	4—30	Միխայլօվօ.	8—41	8—56
Թիֆլիս. . .	8—առաւ.	—	Սուրամ. .	9— 8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ ԵՎ ՓՕԹԻԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
	ժամ. րոպէ	ժամ. րոպէ		ժամ. րոպէ	ժամ. րոպէ
Փօթի. . .	—	8—45 առ.	Սամտրեդի.	—	7—30 երեկ.
Սամտրեդի.	11—39 առ.	—	Փօթի. . .	10—24 երեկ.	—

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒ

Ն. ՊԱԿԷ և ԸՆԿ.

Meuse (Մեօզ), որի կապիտանն է Giboin (Ժիբուէն), հասաւ ՓՕԹԻ, չորեքշաբթի սեպտեմբերի 28-ին և նորից ճանապարհ կընկնի **ՓՕԹԻԻՑ** չորեքշաբթի 5-ին հոկտեմբերի, իսկ **ԲԱԹՈՒՄԻՑ** ուրբաթ օր, 7-ին հոկտեմբերի, ուղևորվելով **ՏՐԱՊԻԶՕՆ, Կ. ՊՕԼԻՍ** և **ՄԱՐՍԷԼ**, եթէ եղանակը բարեյաջող լինի։

Դիմել ընկերութեան ագենտներին ՓՕԹԻՈՒՄ պ. Գարանիօնին, ԲԱԹՈՒՄԻ մէջ պ. Հեքիմեանցին և ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Ըընօին, Արծրունու գալլերէա № 194.

1—3

Մ. Ն. ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՕԼԻՋԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՒՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 ռուբլուց դիւժինը, բազկաթոռներ 6 ռ., դիվաններ 12—25 ռ., կաչէլի, մանկական աթոռներ և այլն։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծալվող սամովարներ։ Զեմոգաններ 2 ռ. 75 կ.—26 ռ., սակավայաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սումկաներ, ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿՂԵՐ 5 ռ. 50 կ.—30 ռ.։

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ուլթաներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՕՆԻ ամաններ 40 ռ., երես լուանալու պղնձէ և ժեստի ամաններ։

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ռ., տուալէտի հայելիներ 2 ռ. 40 կ.—13 ռ., զանազան մետալների մոմակալներ 1 ռ.—15 ռ., սեղանի դգալներ 4 ռ. 50 կ. և թանդ, թէյի դգալներ ֆրաժէի, մելխիօրի, լհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղներ 2 ռ.—26 ռ.։

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի։

ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ռ. 50 կ.—35 ռ., պատրօններ ռէվոլվերների համար, հրացան 6 ռ. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ։ Անգլիական և ամերիկական կլէօնկա 50 կ.—2 ռ. արշինը։

Մշտապէս ունեմ 10,000 ֆ. թէց Պօպով եղբայրների, կաֆէ ՄԻԽԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՑՆԳԱՐԴԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օդեկոլոն) ծխվող փոշիք, պուդրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտէրէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդրներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական գամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօնզի և մարմարիօնի թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մատիաներ, գրչակոթեր, սուրգուչ, փօստի թուղթ, ծրարներ և այլն։

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և դեղատան սպրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ։

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս։

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել. Тифлисъ. **М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.**

52—100



ԿՈՎԻ ՄԱՔՈՒՐ ԿԱԹ

Առանց որ և է **ԽԱՌՆՈՒՐԴԻ** հասցնում են տուն, կճուճը 5 կոպ. ամբողջ տարին առանց թանգացնելու։ Պահանջը **ԵՐԵՔ** կճուճից պակաս չը պէտք է լինի ամեն անգամվայ համար։ Մանրամասն հասցէն թողնել **Պ. ՍՈՒԶԱՆՆԱՃԵԱՆԻ** խանութում (Лондонскій магазинъ), **ԱՌԵՒՏՐԱԿԱՆ** բանկի տակ։

3—3 (2)

ՇՕԿՕԼԱՏ ԵՒ ԴՐԱԺԷ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

ԳՈՐԾԱՐԱՆԻ **ՄՕՍԿՎԱՅԻ** ՄԷՋ

գտնվում է **ԹԻՖԼԻՍՈՒՄ** հետևեալ մագազիններում. Գ. Մ. կօպաձէի, Ս. Անիեվի, Ա. Պ. Ակօպօվի, Վ. Ֆ. Սիտօվի, Ե. Ա. Եղիազարօվի, Գ. Ա. Բաեաղչեվի, Ս. Ա. Ծովիանօվի, Ց. Ա. Բաբանօսօվի, Ց. Ի. Գուրգենօվի, Ի. Ա. Եւանդուլօվի և ուրիշ շատերի մագազիններում, նոյնպէս և **ԿՈՎԿԱՍԵԱՆ** երկրի միւս բոլոր քաղաքներում։

15—24 (1—15)

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Сентября 1883 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.